# Ազգ
Azg

21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՇԱԲԱԹ 159(5242)

ISSN: 1829-1651




# Մեր դժվար անկախությունը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հասարակության մեջ հակոտնյա տրամադրությունները Մաքսային միությանը Հայաստանի միացման վերաբերյալ ակնհայտ տեսանելի են: Տնտեսագիտական վերլուծություններ, այո, ի վերջո կատարվեցին, թե Մաքսային միության տարածքում Հայաստանին սպասվում է եւս չորս տոկոս հավելյալ աճ, իսկ եվրոինտեգրման դեպքում՝ երկուսուկես տոկոս: Սակայն բանն անգամ թվերը չեն, ի վերջո հայ հանրությունը բոլոր տեսակի թվերի հանդեպ անվստահություն ունի, բացի դրանից՝ ի՞նչ է մեկուկես տոկոսը, որը ցանկության դեպքում թվային աճպարարները, իսկ լավ խնդրելու կամ շահագրգռելու դեպքում՝ միջազգային փորձագետները կարող են ստանալ արեւածաղիկ չրթելու պես: Ու չնայած՝ տնտեսագիտական հիմնավորումները որեւէ որոշման հիմքում ունենալու կարեւորմանը՝ առավել կարեւոր ենք համարում որոշման հոգեբանական անդրադարձը հայ հանրության վրա՝ սկսելով Անկախության օրվա մասին դիտարկումներով:

Տես էջ 4

# Մշակութային իրադարձություններով լի հերթական օր Գյումրիում

*Օրվա միջոցառումներին ներկա էր նախագահ Սարգսյանը*

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Երեկ Գյումրիում հանդիսավորապես բացվեց 88-ի դեկտեմբերյան երկրաշարժից ի վեր տնակային պայմաններում գործող՝ Ազատ Շիշյանի անվան համար 6 («Օկտետ») երաժշտական դպրոցի նոր շենքը, որը կառուցվել է «Մեդիամաքս» գործակալության, Հայ օգնության ֆոնդի եւ ավստրալական Do Something ոչ կառավարական կազմակերպության համատեղ նախագծի շրջանակներում: Նախագծին աջակցել են մի շարք արտասահմանյան ու հայաստանյան կառույցներ եւ կազմակերպություններ:



Բացմանը ներկա էր աշխատանքային այցով Շիրակի մարզ ժամանած ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Այստեղ էին «Դիփ փարփլ» հայտնի ռոք խմբի վոկալիստ, այս նախաձեռնության ակտիվ մասնակից Իեն Գիլանը, Do Something կազմակերպության գործադիր տնօրեն Ջոն Դին, դպրոցի կառուցմանն ու երաժշտական գործիքներով համալրմանը մասնակցություն ունեցած բարերարներ, պատասխանատուներ, մեծ թվով հյուրեր, պաշտոնական եւ այլ անձինք: Հանրապետության նախագահը եւ հյուրերը շրջեցին նորաբաց դպրոցի շենքում, ծանոթացան կատարված աշխատանքներին ու այստեղ ստեղծված պայմաններին, ներկա եղան երաժշտական կրթօջախի սաների կատարմամբ համերգին, որից հետո մասնակցեցին խորհրդանշական ծառատունկի: Բացման արարողության ժամանակ ելույթ ունեցան Ջոն Դին, Իեն Գիլանը, «Մեդիամաքս» գործակալության տնօրեն Արա Թադեւոսյանը, բարերար Էդվարդ Մարտիկյանը, ուրիշներ:

Այնուհետեւ հանրապետության նախագահն ու օրվա միջոցառումների մասնակիցներն այցելեցին Գյումրու կենտրոնական հրապարակին հարող «Արագած» ճեմափողոց, ծանոթացան այստեղ վերջերս ավարտված հիմնանորոգման եւ ասֆալտապատման աշխատանքներին:

Տես էջ 3

# Տրապիզոնի ժանդարմերիայի հրամանատար Ալի Օզի դատավարությունը պետք է անցկացվի ծանր հանցագործությունների դատարանում

Թուրքիայի Վճռաբեկ դատարանը որոշում է ընդունել, որ Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանության գործով կասկածյալ, Տրապիզոնի ժանդարմերիայի հրամանատար Ալի Օզի դատավարությունը պետք է անցկացվի ծանր հանցագործությունների դատարանում: Այս մասին, ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, հայտնում է թուրքական T24 անկախ ինտերնետային թերթը՝ նշելով, որ Վճռաբեկ դատարանն այդ որոշումն ընդունել է այն բանից ելնելով, որ Ալի Օզը հանցագործությունից 6 ամիս առաջ տեղեկացված է եղել Դինքի սպանությունը կազմակերպվելու մասին, սակայն կանխելու ոչ մի միջոցառում չի ձեռնարկել:

Հանցագործությունից 6 տարի անց Ալի Օզի նկատմամբ Տրապիզոնի թիվ մեկ առաջին ատյանի եւ թիվ երկու հաշտարար դատարաններում բացված դատական գործերում վերջինս մեղավոր էր ճանաչվել հանցագործության մասին իմանալու, բայց պետական կառույցներին չտեղեկացնելու համար, եւ դատապարտվել 6 ամիս ժամկետով ազատազրկման: Վճռաբեկ դատարանը նրան ծանր հանցագործությունների դատարանում կրկին դատելու իր այդ որոշումն ընդունել է Դինքի ընտանիքի փաստաբանների ներկայացրած բողոքարկման արդյունքում:

Հրանտ Դինքը թուրքական ազգայնական շրջանակների կողմից «Ակօս»-ի խմբագրատան առջեւ սպանվել է 2007թ.-ի հունվարի 19-ին: Սպանությունը գործած Օգյուն Սամասթը դատապարտվել է 22,5 տարվա ազատազրկման, իսկ նրան այդ գործողությանը դրդած Յասին Հայալը՝ ցմահ բանտարկության: Դինքի ընտանիքի փաստաբանները գտնում են, որ հանցագործության հետեւում կազմակերպված հանցավոր խումբ է կանգնած, եւ պահանջում են բացահայտել սպանության իրական մեղավորներին:

# Շիմոն Կրբեց. «Երիտթուրքերի ռասիստական քաղաքականությունը հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը»

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

**Սեպտեմբերի 19-ին Պրահայի Բուբնի երկաթուղային կայարանի կառամատույցում տեղակայված վագոնում անցկացվեց Հայոց ցեղասպանությանը նվիրված երեկո հրեական մշակույթի «9 Դարպաս» 14-րդ միջազգային փառատոնի «Գնացք Լուսից, հույսի գնացք» ծրագրի շրջանակներում: Այս փառատոնը մեկ տարի առաջ կազմակերպել էր նաեւ «Մուսա լեռներ» միջազգային գիտաժողովը, որին մասնակցեց ամերիկաբնակ պրոֆեսոր Շամմասյանը, իսկ անցյալ տարի բեմադրվեց հայտնի դրամատուրգ Առնոշտ Լուստիգի «Աղոթք Կատերինա Հորովիցովայի համար» հայտնի պիեսը, թե ինչպես են հրեաներին ուղարկել համակենտրոնացման ճամբարներ: Եվ Բուբնի երկաթուղային կայարանն այդ իմաստով իզուր չի ընտրվել, քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին այդտեղից են Պրահայի հրեաներին ուղարկել Տերեզինի եւ այլ համակենտրոնացման ճամբարներ: Խիստ խորհրդանշական էր նաեւ միջոցառման անցկացման վայրը: Ընտրվել էր 1940 թվականների բնորոշ մի գնացքի վագոն,**



*ՀՀ դեսպանը եւ Շիմոն Կրբեցը*

**որտեղ էլ ցուցադրվեց ԱՄՆ-ում 1919 թվականին նկարահանված առաջին գեղարվեստական ֆիլմը՝ «Հոշոտված Հայաստան»-ը, նվիրված Հայոց ցեղասպանությանը: Միջոցառման կազմակերպիչ Շիմոն Կրբեցը նշեց, որ ցուցադրությունը նվիրվում է ամերիկահայ Արշալույս (Ավրորա) Մարտիկանյանի հիշատակին, ով, լինելով ցեղասպանության ականատես, նկարահանվել է այդ ֆիլմում: Ավելին, ֆիլմի համար հիմք է հանդիսացել նրա գրած գիրքը, որտեղ Արշալույսը պատմել է ցեղասպանության ընթացքում իր ընտանիքի ապրած դաժանությունները: Հրաշքով փրկված աղջիկը, զարհուրելի ապրումներից հետո երկար տարիներ չի թողել որեւէ մեկն իրեն մոտենա: Ցեղասպանությունների ուսումնասիրությամբ զբաղվող Շիմոն Կրբեցը ներկաներին պատմեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի, երիտթուրքական կառավարության ռասիստական քաղաքականության մասին, ինչն էլ ի վերջո հանգեցրեց հայերի ցեղասպանությանը:**

Տես էջ 5

# Ի՞նչ ոգեւորությամբ են հիմա խոսում Մաքսայինի առավելությունների մասին

Հայաստանի կառավարությունը ակտիվորեն սկսել է Մաքսային միությանն անդամակցությանը պատրաստվել, Հայաստանի վերին էշելոնի բոլոր ներկայացուցիչներն էլ, խոսքերը մեկ արած, ամենայն հավատամքով սկսել են հիմա էլ աղոթել Մաքսային միությանը:

Առնվազն զարմանալ կարելի է, թե ինչպես է ստացվում, որ հայաստանյան իրականության մեջ որոշում կայացնողները երբ եւ որ պահին ինչ հարմար է, այդպես էլ հիշողության հետ խնդիրներ դրսեւորելով, նախկինում նույն եռանդով այն բանի մասին էին խոսում, հիմա նույն եռանդն ուղղում են տրամագծորեն հակառակ ուղղությամբ:

Ամեն դեպքում, բոլոր դատողությունները, թե սպառնալիքներ, ճնշումներ են եղել, այնքան էլ չեն բացատրում կամ արդարացնում ստեղծված իրավիճակը: Այն նույն մարդիկ, որ եվրոպական ինտեգրման ջատագով էին, այսօր նույն կոկորդագոչ տարբերակով Մաքսային միության հեռանկարի մասին են խոսում եւ այնպես, կարծես այդ մասին անկախությունից ի վեր երազել ենք, այն էլ ազգովին:

Բնավ էլ գաղտնիք չէ, որ Ուկրաինան Արեւելյան գործընկերության երկրների շարքում շատ ավելի կարեւոր է դիտարկվում, ավելի մեծ ճնշումների ենթարկվում, անգամ տնտեսական պատժամիջոցների տակ հայտնվում, երբ Հայաստանը քավության նոխազի նման մեջտեղում իրար է խառնվում՝ ենթարկվելով:

Ու երբ հայկական կողմի մեծ ու փոքր չինովնիկները, կարծես ողջ կյանքում միայն Մաքսային միությունն էին երազում, այդ երազանքն են բարձրաձայնում, ասենք, նույն Մաքսային միության մեջ դիտորդի կարգավիճակի մասին խոսակցություններով ճնշումներին դիմագրաված Ուկրաինան, ի դեմս կառավարության, արդեն հավանության է արժանացնում ԵՄ հետ Ասոցիացման համաձայնագրի տեքստը: Այսինքն՝ նոյեմբերին սպասվող համաձայնագրի ստորագրման գործընթացների մեկնարկը տրված է, չնայած հիմա էլ Ռուսաստանը որոշել է ուկրաինական ածխի մուտքն իր երկիր արգելել:

Այս զարգացումների ֆոնին, երբ Մոլդովան էլ իր ապրանքների համար ռուսական շուկան փակելու պարագան դիմակայում է, թերեւս մի քիչ ուշացած, բարձրաձայնվող որոշակի լուծում է առաջարկում Եվրոմիությունը՝ ի դեմս ընդլայնման եւ հարեւանության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի, ինչպիսին, թերեւս ինչ-որ պահի առաջարկվել կամ կարող էր առաջարկվել նաեւ Հայաստանին, եթե, իհարկե, Հայաստանը այդ ուղղությամբ մտածեր:

Օրերս Ֆյուլեն ուկրաինական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում հայտարարեց, թե Եվրոպական միությունը կարող է փոխհատուցել Ռուսաստանի կողմից տնտեսական պատժամիջոցների տակ հայտնված արեւելյան գործընկերներին, այդ թվում՝ Ուկրաինային: ԵՄ ընդլայնման եւ եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատարը նաեւ կրկնել էր, թե արեւելյան գործընկերները ճնշումների են ենթարկվում Ռուսաստանի կողմից:

Միեւնույն ժամանակ, Ֆյուլեն հավաստիացրել է, որ եթե արեւելյան գործընկերներին ճնշում են Եվրոմիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման կամ նախաստորագրման առնչությամբ, ապա ԵՄ-ը պետք է որեւէ տարբերակով հնարավորություն ապահովի փոխհատուցելու պատճառված վնասները: Այդպիսի օրինակներից է Ռուսաստան մոլդովական գինու արտահանման արգելքի դիմաց Եվրոպա մոլդովական գինու արտահանման քվոտաների ավելացումը: Ասվածը, ըստ Ֆյուլեի վերապահման, Ուկրաինային չի վերաբերում, որի պարագայում մաքսային հարցերը Ռուսաստանի հետ հարթված են:

Կարելի է ենթադրել, որ Հայաստանի պարագայում էլ կարող էր նման մի առաջարկ լինել, քանի որ մենք ոչ Ուկրաինա ենք, ոչ էլ այնպիսի մասշտաբներ ունենք, որ փոխհատուցման խնդիրը լուրջ մտահոգություն առաջացնի: Սակայն Եվրոմիությունը կամ այդ մասին նոր է մտածում, կամ էլ Հայաստանին այսպիսի մի առաջարկ անելու դեպքում խիստ կասկածել են ընդունելու հեռանկարի վրա:

Վ. Պ.

# Orange-ը շարունակում է ընդլայնել 42 Մբ/վ գերարագ ցանցի աշխարհագրությունը.

*Արարատ քաղաքը միացավ Հայաստանի չորս քաղաքներին, որտեղ գործում է 42 Մբ/վ արագությամբ ցանց*



**Երեկ Orange-ը հայտարարեց մինչեւ 42 Մբ/վ արագությամբ գերժամանակակից 3G+ ցանցի մեկնարկը Արարատ քաղաքում: Արարատը հինգերորդ քաղաքն է Երեւանից, Գյումրիից, Վանաձորից եւ Էջմիածնից հետո, որտեղ Orange-ը կառուցել է մինչեւ 42 Մբ/վ արագության հնարավորությամբ HSPA ցանց: Հայաստանի մյուս քաղաքներում եւ գյուղերում, որտեղ ապրում է բնակչության ավելի քան 95%-ը, Orange-ը տրամադրում է մինչեւ 21 Մբ/վ արագությամբ ցանցի հնարավորություններ:**

**«Orange-ը շարժական կապի միակ օպերատորն է Հայաստանում, որն առաջարկում է ժամանակակից 42 Մբ/վ գերարագ ցանց Երեւանում եւ մյուս չորս քաղաքներում: Այսօր Հայաստանի ողջ տարածքում որակյալ ինտերնետի մեծ պահանջարկ կա, ուստի մենք շարունակելու ենք ընդլայնել 42 Մբ/վ ցանցի աշխարհագրությունը այլ քաղաքներում եւս:**

**Մեր ցանցի վերազինման աշխատանքները համընկնում են մի ժամանակահատվածի հետ, երբ գերմանական անկախ «P3 Communications» հետազոտական ընկերության կողմից, Հայաստանում կատարված փորձարկումների արդյունքներով, Orange-ի 3G ցանցն արդեն երկրորդ անգամ ճանաչվում է շարժական ինտերնետի որակի առաջատարը Հայաստանում: Մեր նպատակն է նորագույն տեխնոլոգիաների միջոցով բարելավել բաժանորդների ամենօրյա կյանքը՝ լինի դա մեծ քաղաքներում, թե գյուղերում», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Ֆրանսիս Ժելիբտերը:**

**Ինտերնետ Հիմա 4 մոդեմը, որը համատեղելի է 42 Մբ/վ արագությամբ ցանցի հետ, թույլ է տալիս հաշված վայրկյանների ընթացքում բեռնել երաժշտություն, ֆիլմեր, ծրագրեր, խաղալ առցանց խաղեր, ինչպես նաեւ ֆիլմեր դիտել ինտերնետում առանց ընդհատումների, նույնիսկ HD որակով: Ինտերնետ Հիմա 4 մոդեմը կարելի է ձեռք բերել 1 դրամով՝ 12 ամիս բաժանորդագրությամբ:**

***Առաջարկի բոլոր մանրամասները http://orangearmenia.am/internet/:***

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# 3 մլրդ դոլարի «Քարդաշյան» պարտատոմսերի պահանջարկ

*Այդ ծածկանունը ստացած հայկական եվրոպարտատոմսերի նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է*

**Հայաստանը սեպտեմբերի 19-ին տեղաբաշխել էր առաջին եվրոպարտատոմսերը (այսպես ասած «եվրոբոնդերը») միջազգային կապիտալի շուկայում: Դրանց գլխավոր տեղաբաշխողները՝ Deutsche Bank AG-ը, HSBC Bank plc-ը եւ J.P.Morgan Securities plc-ը, հաջողությամբ ավարտել են պարտատոմսերի առաջին տեղաբաշխումը: Թողարկման պայմաններն են. ծավալը՝ 700 մլն ԱՄՆ դոլար, մարման ժամկետը՝ 7 տարի, տոկոսադրույքը՝ 6 տոկոս: Հայաստանի վարկանիշը Moody՛s-ը գնահատել է Ba2 կայուն, իսկ Fitch-ը՝ BB- կայուն: Այդ մասին տեղեկացանք ֆինանսների նախարարությունից:**



**Ինչպես երեկ նշել է ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը, միջազգային փորձագետները բարձր են գնահատել առաջին սուվերեն եվրոպարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները, եւ Հայաստանի մուտքը միջազգային կապիտալի շուկա համարում են հաջողված:**

**«Հայաստանը կարողացավ օգտագործել ԱՄՆ ֆեդերալ ռեզերվի (FOMC) հայտարարությունից հետո շուկայում ստեղծված հնարավորությունը», ասել է ֆինանսների նախարարը: Նրա գնահատմամբ՝ այս թողարկումը դիվերսիֆիկացնում է երկրի ֆինանսական աղբյուրները եւ ստեղծում ուղենիշ, որը կարող են հետագայում օգտագործել հանրապետության մասնավոր հատվածի թողարկողները:**

**Ֆինանսների նախարարության հաղորդագրության մեջ նշվում է նաեւ, որ Հայաստանի կողմից առաջին անգամ թողարկված եվրոպարտատոմսերի պահանջարկը հասել է երեք միլիարդ դոլարի սահմանը:**

**Տեղեկացնենք, որ հայկական պարտատոմսերի ցածր՝ 6 տոկոս դոլարային եկամտաբերությունը նշանակում է, որ հայկական պարտատոմսերն ավելի վստահելի են, իսկ պահանջարկն ավելի բարձր է:**

**Հայտնի է արդեն, որ հայկական եվրոպարտատոմսերը շրջանառվելու են «Քարդաշյան» ծածկանվան տակ, ինչը կարելի է հասկանալ, քանի որ ամերիկյան ֆոնդային բորսաներում շրջանառվող բոլոր երկրների պետական պարտատոմսեր ստանում են նույնականացման ծածկանուն: Ճապոնական պարտատոմսերն ունեն «սամուրայ» ծածկանունը, ավստրալականը՝ «կենգուրու», ռուսականը՝ «մատրյոշկա» եւ այլն: ԱՄՆ-ում «Քարդաշյանը» թերեւս ամենահայտնի անվանումն է, որ կարող է նույնականացվել Հայաստանի կամ հայերի հետ: Բա՞:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Տասը տարվա բանտարկություն Ռ. Թերջանյանին

Մանհեթենի դատարաններից մեկը վերջերս տասը տարվա բանտարկության է դատապարտել հայազգի Ռոբերտ Թերջանյանին, տեղեկացնում է Կանադայում լույս տեսնող «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթը: Ըստ հաղորդագրության՝ 40-ամյա հայը համաստարած զեղծարարությունների եւ գողությունների հայկական ավազակային մի խմբի ղեկավարն է, որ հիվանդների եւ բժիշկների ապահովագրական քարտերից գումարներ է կորզել՝ հանրությանը պատճառելով մոտ 35 միլիոն դոլարի վնաս: Թերջանյանը մեղադրվում է նաեւ ներխուժում-կողոպուտ կազմակերպելու եւ ապօրինի զենք օգտագործելու մեջ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Թեքեյանցիների գնահատանքը մանկավարժներին



9-ամյա Արտակը, որը սովորում է Վահան Թեքեյանի անունը կրող թիվ 92 դպրոցում, որոշել է՝ երբ մեծանա, բժիշկ է դառնալու: Իսկ Թեքեյան մշակութային միության (ԹՄՄ) կենտրոնական վարչության անդամ, հայտնի մտավորական **Երվանդ Ազատյանը** Արտակին քաջալերում է հետեւյալ խոսքերով. «Տարիներ հետո վերադառնալու եմ, որպեսզի իմանամ՝ դարձե՞լ ես բժիշկ, թե՞ ոչ»:

Արտակը եւ մյուս 606 աշակերտները, որոնք սովորում են Երեւանի Թեքեյանի անվան հիմնական դպրոցում, իրենց ապագա մասնագիտությունների ու զբաղմունքների վերաբերյալ տարբեր երազանքներ ունեն: Իսկ դպրոցում նրանց կրթում ու դաստիարակում են, որպեսզի ապագայում առաջին հերթին լավ մարդ դառնան եւ օգտակար լինեն իրենց երկրին: Նորություն չեմ ասում, բայց մի անգամ էլ նշեմ, որ երեխային կրթելու ու դաստիարակելու մեջ թերեւս ամենամեծ դերն ու պատասխանատվությունը մանկավարժինն է: Մի անգամ, երբ մասնագիտությունների մասին զրուցում էի ծանոթ մի հոգեբանի հետ, վերջինս առանձնացրեց բժշկի ու մանկավարժի մասնագիտությունները: Իհարկե, սա չի նշանակում, որ մյուսների դերը սակավ է, սակայն առողջ ու կիրթ հասարակության համար առաջինը պատասխանատու են այս երկուսը, որոնց աշխատանքը պետք է գնահատել ըստ արժանվույն:

«Ուսուցիչ մը հովանավորէ» ծրագիրը, որն իրականացնում է Թեքեյան մշակութային միությունը, նույնպես գնահատանք է հայ ուսուցիչներին: Ծրագիրը իրագործվում է 2000 թվից: Ամեն տարի Հայաստանում ու Արցախում Վահան Թեքեյանի անունը կրող դպրոցների մանկավարժները ստանում են ֆինանսական օգնություն, իսկ նրանց գումարները գոյանում են շնորհիվ Ամերիկայի ու Կանադայի Թեքեյան մշակութային միության կազմակերպած հանգանակության:

Սեպտեմբերի 20-ին միության անդամները Երեւանի Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցի մանկավարժներին ու օժանդակ աշխատողներին հանձնեցին նրանց համար արված նվիրատվությունները: Ուսուցիչներից ու ուսուցչուհիներից յուրաքանչյուրը (62 հոգի) ստացան 130 դոլարին համարժեք դրամ, իսկ օժանդակ աշխատակիցներից ամեն մեկը՝ 30 դոլարին համարժեք դրամ:

Ամեն տարի մանկավարժներին օգնությունը փոխանցելու միջոցառմանը ներկա են լինում նաեւ անդամներ ու վարչականներ Ամերիկայի ու Կանադայի ԹՄՄ-ից:

Երեկ ԹՄՄ-ում նվիրատվությունները փոխանցելուց հետո Երվանդ Ազատյանը եւ Դետրոյթից ԹՄՄ անդամ Հակոբ Մինասյանը շրջեցին դպրոցով, եղան Դետրոյթի մեր ազգայիններից Արեն Խնդիրյանի եւ վաղամեռիկ խմբագիր եւ լրագրող Հակոբ Պողոսյանի անվան եւ անվանակոչված այլ դասարաններում, նաեւ գրադարանում, որը վերանորոգվել է ԹՄՄ-ի աջակցությամբ:

**Հակոբ Մինասյանը** դպրոցում վերջին անգամ եղել էր 2001 թվականին: Ասում է, որ այստեղ տարիների ընթացքում շատ բան է փոխվել, եւ հասկա-



*Ձախից՝ Գայանե Մուրադյանը, Ծովինար Մարդանյանը, Երվանդ Ազատյանը եւ Հակոբ Մինասյանը*

պես ցավով նշում է, որ նվազել է աշակերտների թիվը: Տնօրեն **Ծովինար Մարդանյանը** եւս ընդգծում է աշակերտների թվի խնդիրը, թեեւ վերջին երկու տարիներին աշակերտներն ավելացել են, սակայն 607-ն այն թիվը չէ, որ պետք է ունենար դպրոցը, քանի որ նախատեսված է 1300 աշակերտի համար: Աշակերտների թվի համեմատությամբ՝ ուսուցիչներն ավելի են, ու չնայած օպտիմալացման գործընթացին՝ նրանց կրճատել չեն կարող, քանի որ դպրոցում աշխատելով են հոգում ապրուստի ծախսերը: «Հետեւաբար մեզ ձեռնտու է, որ աշակերտներն ավելանան», հավելում է տնօրենը:

Դպրոցի բյուջեն այս տարի կազմել է 62 միլիոն դրամ, որը մի կերպ է բավականացնում: Այստեղ առաջնային խնդիր է նաեւ մասնաշենքերի վերանորոգումը: Դրանցից մեկը կառուցվել է 1956 թվին, մյուսը՝ 1964-ին: Տնօրենն ասում է՝ եթե երկու շենքում էլ մասնակի վերանորոգումներ չլինեին, ապա դրանք հիմա շահագործելի չէին լինի:

Ուստի վերոնշյալ պայմաններում ուսուցիչներին օժանդակությունը խրախուսանք է ու խթան նրանց հետագա աշխատանքի համար՝ չնայած այս գումարն էլ հեշտությամբ չի հանգանակվում: Երվանդ Ազատյանը նշում է. «Եթե մարդկանց ասենք՝ եկեղեցի ենք կառուցում, դրա համար գումար կտան: Եթե ասենք՝ 2-րդ եկեղեցին ենք կառուցում, գումար դարձյալ կտան առանց հարցնելու՝ արդյոք ժողովուրդն ունի՞ դրա կարիքը: Բայց եթե ասենք, որ կուզենք օժանդակել ուսուցիչներին, որոնք լավ չեն վճարվում, դժբախտաբար այդ գումարը դժվարությամբ կուտան»:

«Ուսուցիչ մը հովանավորէ» ծրագրի մտահղացումը ԹՄՄ կենտրոնական վարչությանն է, իսկ այն կյանքի կոչելու մեջ մեծ է **Մարո Պետրոսյանի** ջանքերը:

Երվանդ Ազատյանը նաեւ ընդգծում է, որ նվիրատուի՝ յուրաքանչյուր ուսուցչի անունով տված գումարն ամբողջությամբ հասցնում են հենց ուսուցչին: Իսկ ծրագիրը համակարգում է ԹՄՄ գրասենյակի պատասխանատու **Գայանե Մուրադյանը**:

Երեկ դպրոցի անձնակազմն իր խորին շնորհակալությունը հայտնեց ԹՄՄ անդամներին եւ հույս հայտնեց, որ ծրագիրը կլինի շարունակական:

## Թեքեյանական խորհրդանիշը

Հարցին, թե ինչո՞վ են տարբերվում Թեքեյանի անվան դպրոցներում սովորող աշակերտները մյուս դպրոցների աշակերտներից, տնօրենը պատասխանում է. «Թեկուզ հենց նրանով, որ դպրոցը կրում է Թեքեյանի անունը»: Որեւէ այլ դպրոցի ուսումնական ծրագրում բանաստեղծ Վահան Թեքեյանն այդպես ներառված չէ, ինչպես Թեքեյանի անվան դպրոցների ծրագրերում: Եվ սա կարեւոր է ոչ թե նրա համար, որ Թեքեյանի անունն են կրում, այլ նրա համար, որ Վահան Թեքեյանն ազգային խորհրդանիշ է: Երվանդ Ազատյանն ասում է՝ Վահան Թեքեյանի բանաստեղծություններում կան մեր ժողովրդի պատմությունը, իմաստնությունն ու ապագան:

Թեքեյանի անվան դպրոցներում նրա ստեղծագործությունները խորացված դասավանդվում են, ցավոք, նույնը չենք կարող ասել մյուս դպրոցների մասին: «Մինչդեռ Թեքեյանը համազգային արժեք է, ինչպես Թումանյանը կամ մի քանի այլ բանաստեղծներ», հավելում է Երվանդ Ազատյանը:

Թեքեյանի անվան թիվ 92 դպրոցը միշտ մասնակցում է թեքեյանական միջոցառումներին: Տնօրեն Մարդանյանն ուրախությամբ ավելացնում է, որ անցած տարի՝ ասմունքի փառատոնի ժամանակ իրենց դպրոցի սաներն ասմունքել են Վ. Թեքեյանի բանաստեղծությունները, իսկ դպրոցը զբաղեցրել է առաջին տեղը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Մշակութային իրադարձություններով լի հերթական օր Գյումրիում

*1-ին էջից*

Նախագահ Սարգսյանը, քաղաքի հյուրերն ու գյումրեցիներն այնուհետեւ ներկա եղան «Գյումրին 2013 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում երկու նոր մշակութային ձեռնարկների: Դրանցից մեկը քաղաքի «Խաչքարերի պուրակում» բացված «Արհեստների եւ արվեստների փառատոնն» էր: Ընդարձակ տարածքում տեղադրված մոտ երկու եւ կես տասնյակ տաղավարներում ցուցադրված էին տեղացի արհեստավորների եւ արվեստագետների՝ դարբինների, ոսկերիչների, թիթեղագործների, գորգագործների, նկարիչների ու քանդակագործների, ոսկեձեռիկ վարպետների գործերը: Գյումրեցի խոհարարները ներկայացնում էին իրենց պատրաստած ավանդական կերակրատեսակները, Գյումրվա «ֆյալլեն» ու թփով տոլման, ելույթ էին ունենում երաժիշտ-կատարողներ, ներկա էր քաղաքի տիկնիկային թատրոնը… «Արենի փառատոն» հիմնադրամի կողմից այս փառատոնի կազմակերպմանը, որի նպատակը Գյումրու պատմամշակութային արժեքներն ու ավանդույթները ներկայացնելը, զբոսաշրջային ներուժի զարգացմանը նպաստելն էր, աջակցել էին ԱՄՆ ՄԶԳ «Ձեռնարկությունների զարգացման եւ շուկայի մրցունակության ծրագրի» աշխատակազմը, ՀՀ նախարարություններ, Հայաստանի համայնքների միությունը:

Իսկ քիչ այն կողմ՝ Վարդանանց հրապարակում ԱՊՀ երկրների «Արտ էքսպո» բացօթյա միջազգային 1-ին ցուցահանդեսն էր, որն, ըստ նախատեսվածի, գործելու է երեք օր: Ցուցահանդեսն անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ եւ նպատակ ունի նպաստել ԱՊՀ մասնակից երկրների միջեւ մշակութային երկխոսության միասնական հարթակի ձեւավորմանն ու համագործակցությանը, խրախուսել տարածաշրջանային մշակութային բազմազանությունը: Իրենց տաղավարներով ներկայացված էին Հայաստանն իր մարզերով ու մշակութային կազմակերպություններով, շուրջ մեկ տասնյակ տաղավարներով՝ ԱՊՀ երկրները: Բալթյան երկրներից մեզ հանդիպեց Լիտվայի տաղավարը: Ենթադրվում է, որ այս նախագիծը կլինի ամենամյա եւ յուրաքանչյուր տարի կանցկացվի ԱՊՀ անդամ պետություններից որեւէ մեկում:



Նախագահ Սերժ Սարգսյանը Շիրակի մարզ այցի ավարտին խորհրդակցություն անցկացրեց Գյումրու քաղաքապետարանում, քաղաքի զարգացման ծրագրերի վերաբերյալ:

## Ցուցանիշներ

# Տնտեսական ակտիվության աճի տեմպը դանդաղում է

### *Հունվար-օգոստոսին աճը կազմել է 3,8 տոկոս*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության երեկ հրապարակած 2013-ի հունվար-օգոստոս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 3,8 տոկոսով: Հարկ է նշել, որ այս տարվա առաջին 6 ամսվա տվյալներով, տնտեսական ակտիվության աճը կազմել էր 4,4 տոկոս, 7 ամիսների տվյալներով` 4 տոկոս:

Այդուհանդերձ, օգոստոսին նախորդ տարվա օգոստոսի համեմատ տնտեսական ակտիվության աճը կազմել է 3,2 տոկոս, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ` 22,9 տոկոս:

Ներկայացնենք տնտեսության ճյուղերում առանձին-առանձին հունվար-օգոստոսին արձանագրված ցուցանիշները:

Արդյունաբերությունում այս տարվա ութ ամիսներին արձանագրվել է 6,2 տոկոս աճ, գյուղատնտեսությունում` 7,1 տոկոս, ծառայությունների ոլորտում` 3,2 տոկոս, առեւտրի շրջանառությունում` 2,5 տոկոս աճ, շինարարությունում արձանագրվել է 8,5 տոկոս անկում:

Գումարային առումով ամենամեծ ծավալ ունի առեւտրի շրջանառությունը` 1 տրլն 333 մլրդ 953 մլն դրամ, իսկ երկրորդ տեղում արդյունաբերությունն է` 764 մլրդ 151 մլն դրամ համախառն արտադրանքի ծավալով, երրորդը ծառայությունների ոլորտն է, 651 մլրդ 721 մլն դրամ ծավալով, չորրորդը` գյուղատնտեսությունը` 467 մլրդ 93 մլն դրամ համախառն արտադրանքի ծավալ, եւ վերջինը շինարարությունն է, որի ծավալը կազմել է 193 մլրդ 617 մլն դրամ: Հիշեցնենք, որ 2000-ականների տնտեսական երկնիշ աճի տարիներին շինարարության տարեկան ծավալը հասել էր 800 մլրդ դրամի:

Աճի ամենաբարձր ցուցանիշը արդյունաբերությունից տեղափոխվել է գյուղատնտեսություն, որտեղ հուլիսին նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ արձանագրվել է 11,9 տոկոս աճ, իսկ նախորդ ամսվա` հուլիսի նկատմամբ` գրեթե կրկնակի` 93,4 տոկոս աճ: Արդյունաբերությունում օգոստոսին 2,9 տոկոս աճ է գրանցվել անցյալ տարվա օգոստոսի եւ 4,7 տոկոս աճ` այս տարվա հուլիսի նկատմամբ: Արդյունաբերությունում աճի տեմպի անկում է նկատվում:

Առեւտրում այս տարվա օգոստոսին նախորդ տարվա օգոստոսի համեմատ 1,1 տոկոս անկում է գրանցվել, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ արձանագրվել է 3,2 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում օգոստոսին 0,7 տոկոս անկում է արձանագրվել, իսկ այս տարվա հուլիսի նկատմամբ` 1,3 տոկոս անկում: Շինարարությունում անցյալ տարվա օգոստոսի նկատմամբ արձանագրվել է 8,4 տոկոս անկում, այս տարվա հուլիսի նկատմամբ` 11,8 տոկոս աճ:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2013-ի առաջին 8 ամիսներին 2012-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 2,8 տոկոսով եւ կազմել մոտ 3 մլրդ 656 մլն դոլար: Արտահանումը կազմել է 952 մլն դոլար, արձանագրելով 8,9 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 2 մլրդ 704 մլն դոլար, աճելով 0,8 տոկոսով: Այս տարվա հունվար-օգոստոսին արտահանումը կազմել է ներմուծման մոտ մեկ երրորդը, իսկ արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 1 մլրդ 752 մլն դոլար:

Միայն օգոստոս ամսին արտաքին առեւտրաշրջանառությունն նվազել է 0,6 տոկոսով եւ կազմել 466 մլն դոլար: Արտահանումը կազմել է 126,8 մլն դոլար, ավելանալով 6,2 տոկոսով, ներմուծումը կազմել է 339,8 մլն դոլար, նվազելով 3 տոկոսով:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-օգոստոսին կազմել է մոտ 145 հազար դրամ, մասնավոր հատվածում` 179 հազար դրամ, պետականում` 116 հազար դրամ:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ տնտեսական ակտիվությունը Հայաստանում թեեւ շարունակում է աճել, բայց աճի տեմպը դանդաղել է: Տարվա վերջին 3-4 ամիսները սովորաբար համարվում են տնտեսապես ամենաաշխույժը, հետեւաբար, կարելի է ակնկալել, որ աճի տեմպերի որոշակի ավելացում կարձանագրվի, բայց անհավանական է, որ հասնի 6 կամ, առավել եւս, 7 տոկոսի, ինչին հասնելու նպատակ էր դրվել երկրի նախագահի եւ կառավարության կողմից: Հավանական է թվում, որ Հայաստանի տնտեսական աճի ցուցանիշը կգտնվի 4-5 տոկոսի միջակայքում: Հիշեցնենք, որ Արժույթի միջազգային հիմնադրամի երեկ հրապարակված զեկույցում այն կանխատեսումն էր արվում, որ մեր երկրի տնտեսական աճն այս տարի 4 տոկոսից ցածր կլինի:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Մեր դժվար անկախությունը

*1-ին էջից*

### Անկախության օրը

22 տարի առաջ տեղի ունեցավ անկախության հանրաքվեն: Մի սպիտակ թերթիկ` վրան հաստ «Այո» եւ ջնջված «Ոչ», մինչ այդ բաժանվում էր որպես թռուցիկ, որպես օրինակ, թե ինչպես պետք է ջնջել Անկախության հանրաքվեի թերթիկը: Իսկ արդեն Հայաստանի քաղաքացու նշան արած թերթիկը այդ օրը պետք է վճռորոշ գործիք դառնար` Խորհրդային Միությունից դե ֆակտո պոկված-իրավաբանորեն անկախությունը չձեւակերպած, Արցախի ազատագրման համար կռիվները մասամբ հետեւում թողած Հայաստանի նոր քաղաքացին: Իհարկե, ամենայն անկեղծությամբ վստահ չեմ, որ տրցակներ չեն լցվել հանրաքվեի տուփերը, ու Արամ Մանուկյանի նման համոզված չեմ Հայաստանի բնակչության 95 տոկոս մասնակցության, իսկ 99 տոկոս` «Այո»-ի օգտին քվեին, քանի որ այն ժամանակ իշխանության մաս չեմ կազմել, որ այդպես խոսեմ, եւ աշխատելով «Լրաբեր» հեռուստածրագրում, շփվելով մարդկանց հետ` հաճախ էի լսում մեղադրանքներ, այդ թվում` հեռուստացույցով անկախության «Այո»-ն քարոզող տողերիս հեղինակի հասցեին, թե չի կարելի հզոր Սովետից դուրս գալ եւ մենակ մնալ աշխարհի դեմ: Սակայն նաեւ նույնքան համոզված եմ, որ երկրով մեկ տարածված ու գրագետ մարդիկ, մտավորականության զգալի շերտը եւ Արցախի ազատագրման ջատագով շատ մեծ թվով մարդիկ «Այոն» ասել էին հանրաքվեի տուփի մոտ գնալով, 99 տոկոս չգիտեմ, բայց որ կեսից զգալի ավելին անկախության օգտին էին քվեարկել` դա հաստատ: Այսինքն` անկախ պետություն ունենալու եւ հզոր կայսրության մեջ անվտանգության նկատառումներով ապրելու ձգտումն այդ պահին հակամարտում էին մեր ժողովրդի մեջ եւ լավ է, որ առաջինն էր ուժեղ, եւ ունեցանք անկախ Հայաստան: Սակայն հոգեբանություն կոտրելը հետագա տարիների անկախության ջատագովներիս բաժին ճակատագիրն էր, ու դա դժվար ճակատագիր էր, քանի որ խորհրդային կենսակերպը նստած էր շատերի մեջ, ու փաստը ցույց է տալիս, որ մինչեւ հիմա էլ նստած է: Դեֆակտո անկախությունը քիչ է, պետք է հոգեվիճակդ անկախի լինի, պետք է, որ ամեն մարդ հասկանա` երկիր կդառնաս, եթե ազատվես կայսրությունից մի բան թռցնելու, աչքակապությամբ ու կաշառվելով խորհրդային ղեկավարությանը խաբելու բարքերից: Այնպես որ, այո, խանգարողները, խորհրդային խտրական երանությունից օգտվող առանձնահատուկների դիմադրությունը մեծ էր: Խանգարում էր նաեւ աղքատությունը, անարդարութունը, զոռբաների ու աչքի սուրմա թռցնողների արագ հարստանալը, որն անշուշտ անկախ պետության շահերը պաշտպանելու մղումով չէր արվում, այլ ի վերջո գործի էր դրվում խորհրդային բարքերից ժառանգված կեղծ ճարպկությունը` ժողովրդի խոսքով` «շուստրիությունը»: Այդպես անկախությունը հռչակելուց հետո այն դե ֆակտո կար, պետականորեն սնվում էր, բայց հենց նույն պետությունում տիրող բարքերի պատճառով հոգեբանորեն խեղճանում-խեղճանում էր` արտագաղթով, բարքերի դեգրադացմամբ ուղեկցվելով: Հիմա 22 տարին քի՞չ էր, թե շատ` հետխորհրդային նիհիլիզմը հաղթահարելու եւ անկախ երկրի քաղաքացու հոգի պատվաստելու համար, չգիտենք, բայց նոր` 22 տարեկան սերունդը տեսել է հենց այս, ինչ կա`անկախ, բայց` ամեն տեսակ վայրիվերումներով երկիր, որի ներսում այնքան էլ հարմարավետ չէ ու համեմատելի չէ արդեն վաղուց անկախությունը կայացրած երկրների հետ: Բայց եւ երիտասարդ մարդը չի ծռում մեջքը` հոգեբանորեն անկախական սերունդն է, չնայած նրան էլ նեղում է օլիգարխա-թիկնապահա-սերիալժամանակը, որտեղ զարգացած մարդը տառասխալներով ստատուսներ գրողն է, որտեղ ազգի հերոսը Գագիկ Ծառուկյանն է, որտեղ գողական հոգեբանությունը խունցի նման միահյուսվել է մեր կյանքին, որտեղ գողական գրականություն կա անգամ ու օրենքով գողերի մասին լուրերն ամենավարկանիշայինն են, որտեղ լրագրողը բամբասանքներ գրողն է, իսկ նորմալ մարդն իր ամենօրյա փոքրիկ քայլերի համար պետք է պայքարի: Միաժամանակ` նոր սերունդը չգիտե` ի՞նչ է մեծ կայսրության մաս լինելը ու ամենատարբեր առիթներով համոզվում է, թե ինչ մեծ բան է անկախ Հայաստանի քաղաքացի լինելը, դժվար, երբեմն տրտնեղող երեւույթներով խեղճացնող, բայց միեւնույն է` շոյող, սիրտ խտխտացնող: Օրինակներ չենք բերի, միայն մեկը` անգամ ֆուտբոլի հանդեպ անտարբեր մարդու սիրտն է արագ բաբախում, երբ Հենրիխ Մխիթարյանը գոլ է խփում ու գերմանիաներում անընդհատ հիշատակում իր փոքրիկ, բայց անկախ հայրենիք Հայաստանի մասին:



Այս ֆոնին` Մաքսային միությանը միանալու որոշման մասին:

Մաքսային միությանը միանալու անտրամաբանությունը պարզ է, որ երկրով մեկ մարդկանց ներսում պետք է ծներ անհանգստություններ: Երբ զավակիդ ամուսնացնում ես կամ ուղարկում ես հեռու երկիր` բնականաբար միայն լավատեսական զգացումներով չես պատվում, քեզ տիրում են նաեւ անհանգստությունները`անհաջողության, նրա կյանքի չստացվելու եւ կամ վտանգների վերաբերյալ կասկածներով: Ու դա բնական է: Ինչքան անտրամաբանելի` այնքան անհանգստությունները շատ: Հիմա, երբ պարզվում է, որ, հա, մենք Մաքսային միությանն անդամակցելն ենք առաջնային համարում, նախ մարդկանց, հանրության լայն շերտին պատում է վիրավորանքը. իսկ ո՞վ է հարցրել իրենց այդ մասին: Ու միայն դրանից հետո միայն, երբ անցնում է առաջին վիրավորանքի պահը, մարդիկ ունակ են դառնում մտածելու երկրի փայփայված ինքնիշխանությանը գուցե հետագայում սպառնացող ինչ-որ վտանգի մասին ու հետո միայն, երրորդ անգամից գալիս են մտքերը, թե հա, միգուցե, անվտանգության խնդիր ունի երկիրը, տնտեսությունը որեւէ ձեւով կարգի բերելու: Իսկ թե ինչու անկախության 22 տարիներին մեր վերնախավերը չսովորեցին ժողովրդից հարցնել իրենց գնալիք քայլերը եւ նեղ շրջապատում են սիրում որոշումներ կայացնել, կարծում ենք` նույնպես հոգեբանության խնդիր է. երեւում է` վերջնականապես չենք ազատագրվել անցյալի տխուր բարքերից, ու գուցե մեր վերնախավերն էլ մտածում են, թե հնարավոր չէ լիովին ազատ լինել ռուսական պարտադրանքից, որը գալիս է նախ ռուսական տարածաշրջանային ամբիցիաներից, ու հետո միայն տնտեսական կամ ռազմական նպատակահարմարությունից: Այլապես` որոշումը չէր պահվի այսքան (ամեն ինչից երեւում է, որ այն ավելի վաղ է կայացվել), եւ եվրոպացիներին ու սեփական ժողովրդին սա կբացատրվեր առանց բարդույթների, հենց ԵՄ տարածաշրջանային համանման ամբիցիաների մատնացույցով եւ հավասարակշռումով: Ու ոչ միայն նրանց: Հենց երեկ, բոլոր մյուսներից առաջ անցնելով ու տարածաշրջանի առումով ամերիկյան ամբիցիաները մատնելով` ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին էր շնորհավորել հայ ժողովրդին անկախության տոնի առիթով` ջերմորեն ու հուզիչ ու մի շարք ակնարկներով... Հայաստանի համար մրցակցությունը, երեւում է, նոր է սկսվում, Աստված պահի Հայաստանը:

Բոլոր դեպքերում` անկախության օրն է, մենք` հայերս, սիրում ենք այդ օրը` անկախ ամեն տեսակ ապակողմնորոշիչներից, անկախ մեր ոխերիմ բարեկամների եւ բարեկամ հակառակորդների նավսից: Երկիր ենք, անկախ ենք, ու Մաքսային միություն, թե ԵՄ, ԱՄՆ թե Ռուսաստան, թող չերազեն, որ կսահմանափակեն մեր անկախությունը, դա մենք թույլ չենք տալու:

ԱԶԳ

# Միջազգային

# Պուտին. «Իսրայելը պետք է հրաժարվի միջուկային զենքից»

Սեպտեմբերի 20-ին իսրայելական լրատվամիջոցներն անդրադարձել են «Վալդայ» միջազգային բանավիճային ակումբում նախօրեին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ունեցած ելույթին եւ հարցուպատասխանին: Ինչպես գրում է newsru.co.il կայքէջը, ելույթում Իսրայելին հետաքրքրող մասը սկսվել է BBC-ի թղթակցի այն հարցից, թե Ռուսաստանը կկարողանա՞ արդյոք Սիրիայի նախագահ Բաշար Ասադին համոզել ամբողջովին ոչնչացնելու քիմիական զենքը, եւ կվերանա՞ արդյոք քիմիական հարվածի վտանգը:



Վլադիմիր Պուտինն ասել է. «Սիրիան հայտարարեց, որ պատրաստ է միանալ եւ արդեն իսկ իրեն միացած է համարում Քիմիական զենքը չտարածելու միջազգային կոնվենցիային: Սիրիայի կառավարությունն արդեն կատարել է այդ գործնական քայլը: Կհաջողվի՞ արդյոք ամեն ինչ հասցնել ավարտին: Ես չեմ կարող 100 տոկոսով ասել: Բայց այն ամենը, ինչ մենք տեսանք վերջին օրերին, վստահություն է ներշնչում, որ դա հնարավոր է եւ կարվի»:

Ապա ՌԴ նախագահը անդրադարձել է նաեւ Իսրայելին՝ հիշեցնելով Սիրիայում քիմիական զենքի հայտնվելու պատմությունը. «Սիրիայում քիմիական զենքը ի հայտ եկավ որպես Իսրայելի միջուկային զենքի այլընտրանք: Մենք դա լավ գիտենք: Եվ զանգվածային բնաջնջման զինատեսակների տարածման կամ չտարածման խնդիրը մնում է շատ արդիական, թերեւս ամենաարդիականն է: Եթե այն դուրս գա վերահսկողությունից, ինչպես մի ժամանակ վերահսկողությունից դուրս եկավ վառոդը, շատ դժվար է պատկերացնել հետեւանքները. դրանք կարող են լինել չափազանց ծանր: Ուստի հարկավոր է ձգտել, իհարկե, աշխարհի առանձին տարածաշրջանների, մասնավորապես Մերձավոր Արեւելքի նման պայթյունավտանգ շրջանների միջուկազերծ կարգավիճակների: Անհրաժեշտ է գործել զգուշորեն, որպեսզի ապահովվի այդ պրոցեսի բոլոր մասնակիցների անվտանգությունը»:

Պուտինն ընդգծել է, որ բուն Իսրայելում էլ կան միջուկային զենքի վճռական հակառակորդներ: Նա հիշեցրել է հայտնի միջուկագետ Մորդեխայ Վանունուի դեպքը, որը 18 տարի բանտում անցկացրեց Իսրայելի «ատոմային գաղտնիքների» հրապարակման համար, բայց բանտարկության ժամկետից հետո էլ շարունակեց պնդել, որ ինքն իրավացի է: «Նրա դիրքորոշման մեջ հակազգային եւ հակաիսրայելական ոչինչ չկա: Նա ինքը հրեա է եւ իր երկրի քաղաքացի, բայց Իսրայելի տեխնոլոգիական գերազանցությունը պարզապես այնպիսին է, որ չի պահանջում միջուկային զենքի առկայություն: Իսրայելն առանց այդ էլ ռազմատեխնոլոգիական առումով մի քանի գլուխ բարձր է տարածաշրջանի բոլոր երկրներից: Իսկ միջուկային զենքը նրան միայն թիրախ է դարձնում, միայն արտաքին քաղաքական խնդիրներ է ստեղծում: Եվ այս առումով Իսրայելում միջուկային զենքի առկայությունը հայտարարած հիշյալ միջուկագետ ֆիզիկոսի տրամաբանությունը զուրկ չէ իմաստից», ասել է ՌԴ նախագահը:

Պուտինի այդ ելույթից հետո Իսրայելի եւ ԱՄՆ-ի հրեաների պատվիրակության ներկայացուցիչներին հաջողվել է լրացուցիչ հարցեր տալ նրան: Զրույցի ժամանակ ՌԴ նախագահը կրկին հայտարարել է, որ Իսրայելը պատրաստ է դիմել «միջուկային զինաթափմանը»: Երբ ամերիկացի պատվիրակներից մեկը հարցրել է, թե այդ դեպքում Ռուսաստանն ինչո՞ւ չի զինաթափվում, Պուտինը պատասխանել է. «Իսրայելը, ի տարբերություն Ռուսաստանի, «միջուկային ակումբի» անդամ չէ»:

Պ. Ք.

## ՊՐԱՀԱ

# Շիմոն Կրբեց. «Երիտթուրքերի ռասիստական քաղաքականությունը հանգեցրեց Հայոց ցեղասպանությանը»

*1-ին էջից*

**1,5 միլիոն հայերի տեղահանումն ու ոչնչացումը նա համարեց ոչ միայն մարդկային, այլեւ մշակութային ցեղասպանություն, քանի որ այդ ընթացքում ավերվել են նաեւ հայկական եկեղեցիներն ու մշակութային օջախները: Նա նաեւ նշեց, որ Հոլոքոստին մասնակից գերմանացի ՍՍ-ականներից շատերը, այդ թվում՝ Ռուդոլֆ Հեսը, 1910-ական թվականներին վկան են եղել հայերի ցեղասպանության: Շիմոն Կրբեցը մանրամասն նկարագրեց, թե ինչպես են կատարվել հայերի տեղահանումն ու ոչնչացումը: Այնուհետեւ բանախոսը կանգ առավ Ավրորա Մարտիկյանի եւ «Հոշոտված Հայաստան» ֆիլմի պատմության վրա, ներկայացրեց Արշալույս-Ավրորայի, ինչպես եւ ֆիլմի ճակատագիրը, քանի որ մեզ է հասել ֆիլմի ընդամենը 20-րոպեանոց մի հատված: Նույնիսկ անցյալ տարի՝ «Մուսա լեռներ» գիտաժողովից հետո Պրահայում Թուրքիայի դեսպանությունը փորձ է արել ազդել փառատոնի կազմակերպիչների վրա: Եվ քանի որ մինչ այսօր Թուրքիայի պետությունը չի ընդունում ցեղասպանությունը, ըստ Կրբեցի, իրենք ավելի հաստատակամ են Հայոց ցեղասպանության մասին խոսելու եւ այսպիսով կանխարգելելու հետագա ցեղասպանությունները:**



*Հայկ Ութիջյան*

**Ցեղասպանությունների կանխարգելման թեման իր ելույթում շարունակեց նաեւ Չեխիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Տիգրան Սեյրանյանը, որը բարձր գնահատեց փառատոնի կազմակերպիչների կատարած աշխատանքը, եւ նշեց, որ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախօրեին այս թեման հայերի համար մնում է ոչ միայն անցյալում, այլեւ իբրեւ ներկայի ու ճակատագրի անբաժանելի մի մաս: «Մենք իբրեւ ժողովուրդ եւ պետություն միջազգային հանրությանը ապացուցում ենք, որ շարունակում ենք մեր հավերժ ճանապարհը եւ դրանով ցույց տալիս, որ նման հանցագործությունը չի կարող նորից կրկնվել»,- ասաց դեսպանը: «Սակայն Հայոց ցեղասպանության դառը դասերը միայն հիշողություն չեն աշխարհի պատմության մեջ, այլ նաեւ ավելի ցցուն են դարձնում Հոլոքոստի, Ռուանդայի, Դարֆուրի եւ շատ այլ ողբերգություններ»: Դեսպանը շնորհակալություն հայտնեց աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Չեխիայում եւ Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնող անհատներին եւ կազմակերպություններին, եւ հույս հայտնեց, որ նման միջոցառումները միգուցե աստիճանաբար հասունացնեն նաեւ մարդկության դեմ կատարված հանցագործության ճանաչմանը Չեխիայի կառավարության կողմից:**

**Ծրագրի երաժշտական մասում «Մուզիկա Պոետիկա» չեխական երգչախումբը կատարեց հայկական հոգեւոր երգեր, իսկ վերջում Պրահայի Կարլի համալսարանի երգչախմբի եւ նվագախմբի գլխավոր դիրիժոր Հայկ Ութիջյանն արամեերենով կատարեց «Քադիշ» երգը եւ ելույթը եզրափակեց «Տեր ողորմյա»-ով, այդպիսով ընդգծելով նաեւ երաժշտական առնչությունները:**

**Վերջում հիշեցնենք, որ «9 Դարպաս» փառատոնի շրջանակներում սեպտեմբերի 11-24-ն անցկացվող միջոցառումները նվիրվում են ցեղասպանության ենթարկված ժողովուրդների հիշատակին: Փառատոնը անցկացվում է Չեխիայի եւ Սլովակիայի նախագահների հովանու ներքո:**

«Օրեր» եվրոպական ամսագիր
Լուսանկարները «Օրեր»-ի

# Ռուսաստանի համար՝ ծովը ծնկներից...

**Ռուսաստան-Վրաստան վերջին շրջանի զարգացումները այնպիսի ուղղությամբ էին ընթանում, որ կարելի էր հեռանկարում այդ հարաբերությունների նորմալացում տեսնել: Սակայն Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ճանաչումը Ռուսաստանի կողմից մեծ կտոր ոսկորի նման ոչ մի կերպ կուլ չի գնում Վրաստանի կոկորդով:**

**Ամեն ինչ փորձում են համաձայնեցնել, հարթել են տնտեսական որոշ հարցեր, վրացական գինին ճամփա է ընկել Ռուսաստան, ռուս եւ վրացի դիվանագետները որոշակի պարբերականությամբ հանդիպում ու հաջողություն են արձանագրում, անգամ համաձայնել էին Սոչիի օլիմպիադայի շրջանակներում հնարավոր համագործակցության գնալ:**

**Վրաստանին խստագույնս դուր չէր եկել, որ Ռուսաստանը Աբխազիան եւ Հարավային Օսիան օլիմպիական իրողություններում ներկայացնում է որպես անկախ պետություններ: Ռուսաստանն էլ, իր հերթին, Վրաստանին քաղաքական կամք դրսեւորելու պահանջ է ներկայացնում, երբ որեւէ հարցում այդպիսին դրսեւորելու ընդունակ չէ:**

**Եվ այն, թե Սաակաշվիլու ռեժիմի հետ Ռուսաստանը չէր խոսում վրաց նախագահի «ոչ համարժեք» լինելու պատճառով, ապա ներկայումս քաղաքական համարձակություն կամ կամք պահանջելը միայն կարող է նշանակել, թե Վրաստանը պետք է ճանաչի Աբխազիան եւ Հարավային Օսիան: Ավելին, Ռուսաստանի մոտեցմամբ՝ Վրաստանում դեռեւս նույն կարծրատիպերն են, ինչ Սաակաշվիլու ժամանակ՝ թերեւս որպես կարծրատիպ ընկալելով այլոց պարագայում ազգային շահի ձեւակերպումը:**

**Ռուսաստանը Վրաստանից թերեւս քաղաքական համարձակություն չէ, որ պահանջում է:**

Վ. Պ.

# Կ. Ջամիլ. «Սիրիացի ծայրահեղականները զարին էին ստացել Լիբիայից»



Սիրիայի փոխվարչապետ Կադրի Ջամիլը բրիտանական «Գարդիան» թերթին տված հարցազրույցում հայտարարել է, որ իր երկրի քաղաքացիական պատերազմում ստեղծվել է մեռյալ վիճակ, եւ կողմերից ոչ մեկը ի վիճակի չէ հասնելու հաղթանակի:

Կադրի Ջամիլը ընդգծել է, որ նման պայմաններում վճռական հաղթանակ տանել չեն կարող ո՛չ կառավարական զորքերը, ո՛չ էլ ապստամբները:

Նրա խոսքերով, Սիրիայի նախագահ Բաշար Ասադը մտադիր է Ժնեւում նախատեսվող հաշտության կոնֆերանսում հրադադարի երկարաժամկետ համաձայնագրի կնքման կոչ անել: Ջամիլը նշել է, որ զինադադարի կատարմանը պետք է հետեւեն «չեզոք կամ բարեկամական պետությունների» դիտորդներ:

Փոխվարչապետն ասել է, որ նախագահը Ժնեւում ընդդիմադիրներին կառաջարկի սկսել քաղաքական խաղաղ կարգավորման բանակցություններ, ինչպես նաեւ կպահանջի դադարեցնել օտարերկրյա միջամտությունը Սիրիայի ներքին գործերին:

«Գարդիանի» թղթակից Ջոնաթան Սթիլի հետ զրուցելիս Կադրի Ջամիլը դատապարտել է ԱՄՆ-ի այն պահանջը, ըստ որի Ժնեւում սիրիական ընդդիմության միակ ներկայացուցիչը պետք է լինի «Ազգային կոալիցիան»:

Դամասկոսի արվարձանում օգոստոսի 21-ին տեղի ունեցած քիմիական գրոհի կապակցությամբ Ջամիլը հայտարարել է, թե ՄԱԿ-ի տեսուչների զեկուցագիրն «այնքան էլ անաչառ չէ»: Նրա խոսքերով, այդ օրն արձակված հրթիռները պարունակել են զարին, որը Մուամմար Քադդաֆիի տապալումից հետո Լիբիայից ուղարկվել էր սիրիացի ծայրահեղականներին:

# Մի լուսանկարի պատմություն



«Լուսանկարչության լեզուն համամարդկային է, այն թարգմանչի կարիք չունի». պրոֆեսիոնալ լուսանկարիչ Անդրանիկ Քոչարի այս արտահայտությունը որքան էլ որ հավաստի է՝ ներկայացվող բազմաթիվ լուսանկարներ իրենց ողջ խոսունությամբ հանդերձ ուղեկցվում են բացատրական մեկնությամբ, պատկերվող անցքի, իրողության, տեղի, ժամանակի նկարագրությամբ, այն դարձնելով ավելի հասկանալի:

Լուսանկարը տեսանելի պատկերից զատ իր մեջ ունի պահված նաեւ պահի պատմություն, որի բացահայտումը էլ ավելի արժեքավոր է դարձնում այն, ինչպես օրինակ Յուսուֆ Քարշի Չերչիլի դիմանկարը, Հովհաննես Քյուրքչյանցի Անիում արած խմբանկարը՝ Ռափայել Պատկանյանի ու Ջիվանու ներկայությամբ: Տեղին է հիշատակել Վահէ Սամուէլյանի «Հայ անցեալը լուսանկարներով» երկհատորյա աշխատությունը, որի հենքը լուսանկարի պատմությունն է:

Այս լուսանկարի խորհուրդը եզակի մի ասք է, վեր հառնող հիշողություն մեր մեկդարյա անցյալից:

Լուսանկարում, որն արված է 1915 թվականի հունիսի 15-ին Պոլսում պատկերված է կոշկակար Գեւորգ Ականջյանի ընտանիքը: Ժամանակի ստույգությունը հավաստի է՝ Պոլսում կախաղան բարձրացված Հնչակյան կուսակցության 20 գործիչների մահապատժի նույն օրը, երբ ընտանիքը շրջանցելով հրապարակի կառափնարանը, այցելել է լուսանկարչատուն: Կենտրոնում նստածը՝ Գեւորգ Ականջյանն է, ձախից կանգնած է կինը՝ Վարդ Խաթունը, որի հայրը՝ Գեւորգը լարային գործիքի նվագածու էր Աբդուլ Համիդի պալատում, աջից Գեւորգի քույրն է՝ Նեմզար Բարտեղյանը, որը լուսանկարվելու պահին ամուսնացած էր: Կողքին կանգնած է Գեւորգի որդին՝ Սիմոնը, ծնված 1902 թվականին, իսկ ձախ եզրի աղջնակը Գեւորգի դուստր Վերժինն է, ծնված 1908 թվականին:

Դժնի օրերի վատ կանխազգացումով Գեւորգը այս լուսանկարը պատվիրում է հինգ օրինակից եւ բաժանելով յուրաքանչյուրին՝ իր նմուշը պատվիրում, որ երբեք չբաժանվեն իրենց լուսանկարից, ինչ պայմաններում էլ գտնվեն:

Սիմոնը մնում է Նեմզարի մոտ Պոլսում, իսկ Գեւորգը Վարդ Խաթունի ու Վերժինի հետ վերադառնում է Ռոդոստո իր գործին, որտեղից էլ մի քանի օր հետո հայության տեղահանում են դեպի Դեր Զոր: Վերժինի աչքի առաջ նահատակվում է հայրը: Իսկ հրակեզ ճանապարհին չդիմանալով՝ նվաղած հոգեմաշ մայրը աղերսում է դստերը չկանգնել եւ շարունակել երթը շարասյան հետ: Յոթնամյա դեռահասի հայացքում տպվում է Մոսուլի ճանապարհի բորբ արեւի տակ անէացող իր մոր պատկերը:

1960 ական թվականներին Բուլղարիայից Լիբանան բանջարեղենի պահածո ներածող մի հայ վաճառական, ում անունը ցավոք չի պահպանվել, Պլովդիվ քաղաքում ծանոթանում է Սիմոն Ականջյանի հետ: Սակավահունչ այս ազգանունը նրան ծանոթ է թվում, իսկ երբ Սիմոնը ցույց է տալիս հոր պատվիրանով փայփայված լուսանկար մասունքը, առավել եւս վստահ համոզվում է, որ թե ազգանունը եւ թե լուսանկարը իրեն ծանոթ են:

Նրա իսկ խնդրանքով պատճենահանված լուսանկարը եւ հասցեն վերցնելով, երբ վերադառնում է Բեյրութ՝ ամենուր հարց ու փորձ է անում՝ ցույց տալով լուսանկարը: Ռոդոստացի մի կին ճանաչում է լուսանկարում պատկերված ընտանիքը, եւ ցույց տալիս Վերժին Հայրապետյանի տունը:

Հոգեցնցում չառաջացնելու վախով, հայ վաճառականը արտի տրոփյունով բախում է հասցեատիրոջ դուռը:

Շեմին հայտնվում է տարարյուն մի երիտասարդ՝ Մարկոս Հայրապետյանը, որը իմանալով փնտրվողի անունը՝ հարձակվում է անծանոթի վրա, ջղայնացած հարցնելով, թե ով է նա եւ ինչ գործ ունի իր մոր հետ: Իսկ տեսնելով լուսանկարը, առավել բորբոքված պահանջում է բացատրություն, թե ինչպես է առեւանգել այդ մասունքը իրենց տնից: Ավագ եղբոր՝ Կարապետի հայտնվելով եւ իսկությունը պարզելով եղբայրները հոգեկան խոր ապրում են ունենում: Նրանք սկսում են իրենց մորը՝ Վերժինին կամացկամաց ընտելացնել այն մտքին, որ իր եղբայրը ողջ է ու կարող է գտնվի: Բավական ժամանակ հետո ի վերջո նրանք հաստատում են, որ եղբորը տեսնող է եղել Պլովդիվում: Այդ ժամանակ սոցիալիստական Բուլղարիայի եւ կապիտալիստական Լիբանանի միջեւ թեեւ սերտ կապ չկար եւ հանդիպումը անորոշ էր, այնուամենայնիվ, Մարկոսը երդվում է մորը հանդիպեցնել մորեղբոր հետ:

Եվ 1966-ին Մարկոսը մորը ուղեկցում է Պլովդիվ՝ եղբորը տեսնելու: Եղեռնից ցաք ու ցրիվ եղած քույր ու եղբայր՝ շնորհիվ պահպանված լուսանկարի, ավելի քան կես դար հետո գտնում են իրար:

Լուսանկարում պատկերված 7-ամյա Վերժինը իմ ազնիվ բարեկամ Գեւորգ Յազըճյանի մորական տատիկն է: Այս լուսանկարն էլ, զգայացունց պատմությունն էլ, իր պահոցից են:

ՎԱՀԱՆ ՔՈՉԱՐ

# Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված համերգ

ՀՀ անկախության օրվա միջոցառումների շրջանակում 2013թ. սեպտեմբերի 18-ին Բելառուսի պետական ֆիլհարմոնիայի դահլիճում կայացել է համերգ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 110-ամյակին:

Միջոցառումը կազմակերպել էին Բելառուսի Հանրապետությունում ՀՀ դեսպանությունը եւ Բելառուսի «Միասին» երիտասարդական կազմակերպությունը ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ պետական կոնսերվատորիայի եւ Բելառուսի հայազգի բարերարների աջակցությամբ:

Համերգին ելույթ են ունեցել Հայաստանից ժամանած, միջազգային մրցույթների դափնեկիր, ջութակահարուհի Լուսինե Հարությունյանը եւ Բելառուսի պետական ֆիլհարմոնիայի մենակատար, դաշնակահար Ալեքսանդր Պոլյակովը:

Հնչեցին Ա.Խաչատրյանի, Ա.Բաղդասարյանի, Կոմիտասի եւ այլ հեղինակների ստեղծագործություններ:

Միջոցառմանը ներկա էին ԲՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների, ինչպես նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ:



# Եվրոպայում Կոմիտաս տարածող վարպետաց քառյակը

## *Հայ, սերբ, ռուս եւ իտալացի ջութակահարների համերգներին հնչում են բացառապես հայ հանճարի ստեղծագործությունները*



*Ձախից աջ՝ Բորիս Բատալովիչ, Արտյոմ Պետրովիչեւ, Նիկոլա Սեգատտա, Հրաչյա Գալստյան*

**Աշխարհի մշակութային կարեւորագույն օջախներից մեկում՝ Իտալիայի հյուսիսում, ստեղծվել ու իր մի քանի կարեւոր յուրօրինակություններով իմաստավորված ապրում է ջութակի վարպետների քառյակը՝ որի նմանը աշխարհի մեկ այլ վայրում ուղղակի գոյություն չունի:**

**Առաջին յուրօրինակությունն այն է, որ քառյակը ինտերնացիոնալ է: Առաջին ջութակ հայ՝ Հրաչյա Գալստյան (Հայաստան, ապրում է իտալական Կրեմոնա քաղաքում), երկրորդ ջութակ՝ սերբ Բորիս Բատալովիչ (Սերբիա, ապրում է սերբական Նովի Սադ քաղաքում), ալտ՝ Արտյոմ Պետրովիչեւ (Ռուսաստան, ապրում է իտալական Կրեմոնա քաղաքում) եւ թավջութակ՝ իտալացի Նիկոլա Սեգատտա (Իտալիա, ապրում է իտալական Տրենտո քաղաքում): Երկրորդ յուրօրինակությունը, որ քառյակը կազմված է իտալական ջութակագործների բարձրագույն դպրոցում ուսանած ջութակի վարպետներից, որոնք նվագում են իրենց պատրաստած գործիքներով: Եվ երրորդը՝ քառյակի համերգացանկը բաղկացած է բացառապես մեկ անձի ստեղծագործություններից եւ դա հայ հանճար Կոմիտասն է:**

**Խմբի ստեղծման գաղափարը Երեւանի կոնսերվատորիայի եւ ապա իտալական ջութակագործների վարպետաց բարձրագույն դպրոցի շրջանավարտ Հրաչյա Գալստյանինն է, որն այսօր իր ընտանիքով ապրում եւ ստեղծագործում է Իտալիայի հյուսիսում գտնվող գողտրիկ Կրեմոնա քաղաքում: Գաղափարի շուրջը հավաքվածները չունեն հովանավոր, պրոդյուսեր, ֆինանսական լրացուցիչ միջոցներ, նրանք ընդամենը ունեն Կոմիտասը Եվրոպային ու նաեւ աշխարհին ներկայացնելու ազնիվ նպատակ:**

**Սա ուղղակի հոգով մշակույթին նվիրված անձանց անմեկնելի եւ անբացատրելի երեւույթ է, երբ հավաքվել են չորս անհատականություն, չորս աշխարհահայացքի ու մշակույթի ներկայացուցիչ, գտել ընդհանուր լեզու եւ այդ «լեզվի» կրողը Կոմիտասն է: Նրանք հստակ գիտեն իրենց առաքելությունը, այն է նվագել ու ներկայացնել կոմիտասյան ելեւէջն ու թրթիռը եվրոպացի ունկնդրին: Նրանց յուրօրինակ համերգների աշխարհագրությունը արդեն դուրս է եկել Իտալիայի սահմաններից, հասել Շվեյցարիա եւ Ավստրիա: Հայաստանից հեռու նրանք նվագում եւ ապրեցնում են հայ հոգու ձայնը, մեր մշակի ու զինվորի պրկված նյարդերի ու մկանների թրթիռը, որն իր նրբագույն թելիկներով հավաքել ու հելունագործել է մեծն Վարպետ Կոմիտասը:**

**Վեհի եւ գեղեցիկի ասպետների այս քառյակի մասին տեղեկանում են միայն նրանք, ովքեր նրանց համերգների ունկնդիրն են: Վարպետաց քառյակի մասին տեղեկացողները, նրանց կատարումներով եւ Կոմիտասի յուրօրինակ մեկնաբանությունով հիացողների գնալով ստվարացող բանակում հիմնականում օտարազգիներն են եւ մեր հայրենակիցներին մատների վրա կարելի է հաշվել:**

**Այսօր, երբ մեր մշակութային ցանկացած ներկայացում կարող է դառնալ որոշիչ գրավականն ու բաղադրիչ հայկական մշակութային այցեքարտի, մենք մի տեսակ աններելի անմասնակից ենք մեր հանճարը ներկայացնող այսպիսի յուրօրինակ նախաձեռնություններին: Միգուցե համեստությունը սազական է իրենց առաքելությունը գիտակցող ի բնե մտավորական մարդկանց, բայց մեր կողմից մեծ շռայլություն է այս իրողությունը չօգտագործելն ու անտեսելը: Այսպիսի ազնիվ գաղափարները շատ դժվար են ծնվում եւ շատ դժվար էլ ապրում են, սակայն Հրաչյա Գալստյանի ազգանվեր նպատակի իրականացումը անցել է կայացման դժվար սահմանը եւ հիմա ուղղակի պետք է գոնե սկզբում բարոյապես օժանդակել ու աջակցել վարպետաց քառյակին եւ իր գաղափարակրին, որ նրա նախաձեռնությունը դառնա ուշադրության ու գնահատման արժանի նաեւ մայր հայրենիքում, որը կարող է ոգեւորիչ օրինակ հանդիսանալ մնացյալի համար: Անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն, որ տարբեր մշակույթների կրող այս քառյակի մեկնությամբ Կոմիտաս հանճարի լարային թրթիռը հասնի աշխարհի տարբեր անկյուններ, որ նրանց մշակութային առաքելությունը ծառայի իր գերագույն եւ հիմնական նպատակին:**

**Հրաչյա Գալստյանը վարվել է իր հոգու թելադրանքով, նա ջութակագործ է եւ ջութակ նվագելն ու համերգ տալը, այն էլ սակավաթիվ ունկնդրի մոտ ըստ էության չի կարող նյութական որեւէ լուրջ շարժառիթ ունենալ: Նրա նպատակի ու գաղափարի, իսկ ապա նաեւ դրա կենսագործման հիմնական շարժիչ ուժը Կոմիտասն է ու նրա գոհարների լարային մեկնաբանումը հայրենի եզերքից անդին: Սա բացառապես հոգու ճախրանք է եւ հայ մտավորականին վայել գործունեություն: Հրաչյա Գալստյան հայը ստեղծել է իր վարպետաց քառյակը, ու նվագում են նրանք ականջալուր լինելով միայն այն հիացմունքին ու ծափերին, որոնք որպես ամենամեծ վարձատրություն իրենց է տալիս ունկնդիրը: Այս յուրօրինակ նախաձեռնության մասին անհրաժեշտ է, որ տեղեկանան ոչ միայն մշակութային ինտեգրացիայի համար պատասխանատու մարմինները, այլեւ նրանք, ովքեր արժեւորում են հոգեւորը, ովքեր հակված են իրական մեկենասության ու բարեգործության:**

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Մարզական

## Երեւանը 2020-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցկացման թեկնածուների ցանկում է



ՈւԵՖԱ-ի գործադիր կոմիտեի նիստում հաստատվել է 2020-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցկացման համար հայտ ներկայացրած երկրների ցանկը: 32 թեկնածուների թվում է նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանը: Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիան պաշտոնապես ՈւԵՖԱ էր ուղարկել առաջնության հանդիպումները «Հրազդան» մարզադաշտում անցկացնելու հայտը:

Ինչպես հայտնի է, ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիի առաջարկով 2020-ի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները պետք է անցկացվեն 13 երկրների նույնքան քաղաքներում: Թե որ 13 երջանիկ քաղաքները կընտրվեն թեկնածուների ցանկից, հայտնի կդառնա 2014-ի սեպտեմբերի 25-ին:

Ահա թեկնածուների ցանկը:

Հայաստան (Երեւան), Ադրբեջան (Բաքու), Բելառուս (Մինսկ), Բելգիա (Բրյուսել), Բուլղարիա (Սոֆիա), Խորվաթիա (Զագրեբ), Չեխիա (Պրահա), Դանիա (Կոպենհագեն), Անգլիա (Լոնդոն), Ֆինլանդիա (Հելսինկի), Ֆրանսիա (Լիոն), Մակեդոնիա (Սկոպիե), Գերմանիա (Մյունխեն), Հունաստան (Աթենք), Հունգարիա (Բուդապեշտ), Իսրայել (Երուսաղեմ), Իտալիա (Հռոմ, Միլան), Ղազախստան (Աստանա), Հոլանդիա (Ամստերդամ), Լեհաստան (Վարշավա, Խոժուվ), Պորտուգալիա (Լիսաբոն, Պորտո), Իռլանդիա (Դուբլին), Ռումինիա (Բուխարեստ), Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ), Շոտլանդիա (Գլազգո), Սերբիա (Բելգրադ), Իսպանիա (Մադրիդ, Բարսելոն, Բիլբաո, Վալենսիա), Թուրքիա (Ստամբուլ), Ուկրաինա (Կիեւ, Դոնեցկ), Ուելս (Կարդիֆ), Շվեյցարիա (Բազել), Շվեդիա (Սոլնա):

## Ղազարյանն իր թիմակիցների հետ պարտությամբ մեկնարկեց



Մեկնարկեց ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարը: Կարագանդայի «Շախտյորը», որի կազմում հանդես է գալիս ՀՀ հավաքականի հարձակվող Գեւորգ Ղազարյանը, մեկնարկային խաղում հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջեց հունական ՊԱՕԿ-ին:

Ղազախստանի չեմպիոնն առաջինը բացեց հաշիվը: 50-րդ րոպեին 11 մ հարվածը հստակ իրացրեց Կանյասը: Սակայն հետագայում դաշտի տերերը 2 գոլ խփեցին ու հաղթեցին: Ընդ որում հաղթական գնդակը Վուկիչը խփեց ավելացված ժամանակում:

Գեւորգ Ղազարյանը «Շախտյորի» մեկնարկային կազմում մասնակցեց ողջ հանդիպմանը: Թիմի գլխավոր մարզիչ Վիկտոր Կումիկովը «Շախտյորի» մի քանի ֆուտբոլիստներից բացի, դժգոհ է եղել նաեւ Ղազարյանի ցուցադրած խաղից. «Կարող էինք հաղթել, սակայն մի քանի հանգամանքների պատճառով պարտվեցինք: Սարսափելի վատ խաղաց Ֆինոնչենկոն: Շատ գովեցինք նրան, «աստղ» դարձրինք: Խիժնիչենկոն եւ Ղազարյանն էլ վատ խաղացին: Դրանց գումարվեց Պորիվաեւի անիմաստ հեռացումը խաղադաշտից: Ե՛վ այս, ե՛վ «Սելթիկից» կրած պարտությունները ցավալի են մեզ համար: «Սելթիկի» հետ խաղում ոչ մեկին չէի կարող նախատել, բոլորն էլ իրենց ողջ ուժերը ներդրեցին: Իսկ այսօրվա խաղում պատկերն այլ էր: Եթե Վիչյուսը 2-րդ գոլը խփեր, չէինք պարտվի»:

Անհաջող հանդես եկավ նաեւ G խմբում ընդգրկված Կիեւի «Դինամոն», որը սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց բելգիական «Գենկին»: Մախաչկալայի «Անժին» Տիրասպոլում գոլազուրկ ոչ-ոքի խաղաց Մոլդովայի բազմակի չեմպիոն «Շերիֆի» հետ: «Անժիի» կազմում բացակայում էր Կառլեն Մկրտչյանը: Ռուսաստանի մյուս ներկայացուցիչը՝ Կրասնոդարի «Կուբանը» մրցակցի դաշտում պարտվեց շվեյցարական «Սանկտ Գալենին» (0-2), որը նախորդ փուլում պայքարից դուրս էր մղել Մոսկվայի «Սպարտակին»:

Իսկ ահա D խմբում ընդգրկված Կազանի «Ռուբինը» Սլովենիայի «Մարիբորի» հետ արտագնա խաղում աչքի ընկավ արդյունավետությամբ՝ հաղթելով 5-2 հաշվով:

Ուկրաինական 2 ակումբներ՝ «Չեռնոմորեցն» ու «Դնեպրը» հաջողության հասան մրցակիցների դաշտերում: «Չեռնոմորեցը» Զագրեբում 2-1 հաշվով առավելության հասավ տեղի «Դինամոյի» նկատմամբ: Իսկ «Դնեպրը» 1-0 հաշվով հաղթեց ռումինական «Պանդուրիին»:

Ահա կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Թուն»-«Ռապիդ»՝ 1-0, «Ֆրայբուրգ»-«Սլովան»՝ 2-2, «Էշտորիլ»-«Սեւիլիա»՝ 1-2, «Բետիս»-«Լիոն»՝ 0-0, «Վիկտորիա»-«Ռիեկա»՝ 4-0, «Լացիո»-«Լեգիա»՝ 1-0, «Ապոլոն»-«Տրաբզոնսպոր»՝ 1-2, «Տոտենհեմ»-«Տրոմսյո»՝ 3-0, «Մաքաբի»-«Ալկմար»՝ 0-1, «Վալենսիա»-«Սուոնսի»՝ 0-3, «Էյնդհովեն»-«Լուդոգորեց»՝ 0-2, «Զալցբուրգ»-«Էլֆսբորգ»՝ 4-0, «Ստանդարտ»-«Էսբերգ»՝ 1-2, «Վարեհեմ»-«Վիգան»՝ 0-0, «Ֆիորենտինա»-«Պասուշ»՝ 3-0, «Այնտրախտ»-«Բորդո»՝ 3-0, «Մաքաբի» Թ.-Ա.-«Ապոել»՝ 0-0:

## Տորստեն Ֆինկը պաշտոնանկ արվեց

Դորտմունդի «Բորուսիայից» կրած պարտությունը ճակատագրական եղավ «Համբուրգի» գլխավոր մարզիչ Տորստեն Ֆինկի համար, որը պաշտոնանկ արվեց: «Համբուրգն» առաջնության 5 հանդիպումներում 3 պարտություն է կրել՝ 4 միավորով զբաղեցնելով 14-րդ տեղը:

Ֆինկը «Համբուրգը» գլխավորել էր 2011-ի հոկտեմբերին՝ օգնության ձեռք մեկնելով աղյուսակը եզրափակող թիմին: Նրա գլխավորությամբ առաջին խաղում «Համբուրգը» հաղթեց «Ֆրայբուրգին» (2-1), որից հետո 9 խաղ անընդմեջ պարտություն չկրեց: Հենց Ֆինկի շնորհիվ «Համբուրգը» պահպանեց տեղը բունդեսլիգայում:

# ՇԱԽՄԱՏ

## Ռոբերտ Մուրադյանի գերազանց արդյունքը

Թբիլիսիում անցկացված շախմատի աշխարհի կանանց նախկին չեմպիոնուհի Նոնա Գափրինդաշվիլու գավաթի խաղարկությունում հիանալի հանդես եկավ մինչեւ 8 տարեկան տղաների մրցաշարի մասնակից Ռոբերտ Մուրադյանը: Նա հաղթեց իր բոլոր 9 մրցակիցներին ու արժանացավ գլխավոր մրցանակին:

2-րդ տեղը գրաված վրացի Սաբա Լոմսաձեն հայ շախմատիստից հետ մնաց մեկ միավորով: Հայաստանի մյուս պատվիրակը՝ Համլետ Բրուտյանը 5 միավորով 20 մասնակիցների մեջ գրավեց 6-րդ տեղը:

Մինչեւ 10 տարեկան տղաների մրցաշարում էլ գլխավոր մրցանակին արժանացավ Մամիկոն Ղարիբյանը: Նա 9 հնարավորից վաստակեց 7,5 միավոր՝ մնալով անպարտելի: Նա տոնեց 6 հաղթանակ, 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի: Ղարիբյանի հետ հաշտություն կնքած մրցակիցների թվում էր Գոռ Մելքոնյանը, որը 6 միավորով գրավեց 6-րդ տեղը 35 մասնակիցների մեջ:

## Հայ շախմատիստները միջին դիրքերում են

Շախմատի աշխարհի մինչեւ 20 տարեկանների առաջնության 7-րդ տուրում Սամվել Տեր-Սահակյանը մրցաշարում առաջին անգամ պարտիան ավարտեց ոչ-ոքի՝ հաշտություն կնքելով Վահապ Սանալի հետ: Տուրը հաղթական էր Վահե Բաղդասարյանի համար, որը պարտության մատնեց Յիյե Վանգին: Մեր շախմատիստները վաստակել են 4,5 միավոր: Վահեն 27-րդ տեղում է, Սամվելը՝ 31-րդ:

Մրցաշարային աղյուսակը 6,5 միավորով միանձնյա գլխավորում է Յույ Յանյինը: 6 միավորով նրան հետապնդող Ալեքսանդր Իպատովը հաղթեց Դաս Դեբաշիսին:

Կանանց մրցապայքարում Մարիա Գեւորգյանը 4 միավորով 35-րդ տեղում է: Մարիան 7-րդ տուրում ոչ-ոքի խաղաց ռուսաստանցի Վլադա Սվիրիդովայի հետ: Առաջատարը 6 միավորով ռումինուհի Իրինա Բուլմագան է, որը պարտության մատնեց մինչ այդ աղյուսակը գլխավորող ինդոնեզացի Վարդա Մեդինային: Վերջինս 5,5 միավորով Ալինա Կաշլինսկայայի, Դեյսի Կորիի եւ Մերի Արաբիձեի հետ հետապնդում է առաջատարին:

## Հոու Յիֆանն իրեն վերադարձրեց շախմատային թագը




Չինացի շախմատիստուհի Հոու Յիֆանը 9,5 ամսվա ընդմիջումից հետո կրկին իրեն վերադարձրեց կանանց շախմատի աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը: Աննա Ուշենինայի հետ Չինաստանում ընթացող աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղի 7-րդ պարտիայում 40-րդ քայլին հաղթանակ տոնելով, Հոու Յիֆանը ժամկետից շուտ շահեց մրցամարտը՝ 5,5-1,5: Յիֆանը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Անցկացրած 7 պարտիաներում Ուշենինային այդպես էլ չհաջողվեց ճաշակել հաղթանակի քաղցրությունը: Չինացի շախմատիստուհու առավելությունն ակնհայտ էր: Նա տոնեց 4 հաղթանակ, 3 պարտիա ավարտեց ոչ-ոքի:

Հիշեցնենք, որ Աննա Ուշենինան շախմատի աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճել էր անցյալ տարվա դեկտեմբերին Խանտի Մանսիյսկում նոկաուտ համակարգով անցկացված մրցաշարում: Աշխարհի գործող չեմպիոնուհի Հոու Յիֆանը այդ մրցաշարում պարտվել ու դուրս էր մնացել հետագա պայքարից:

Հոու Յիֆանը շախմատի աշխարհի կանանց չեմպիոնուհու տիտղոսն առաջին անգամ նվաճել էր 2011-ի նոյեմբերին Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուի հետ մրցախաղում: Այն ժամանակ հաղթող ճանաչվելու համար Հոու Յիֆանին բավարարեց 8 պարտիան: Նա մրցախաղը շահեց 5,5-2,5 հաշվով: Հոու Յիֆանն ապացուցեց, որ ներկայումս կանանց շախմատում ինքն ուժեղագույնն է:

## Դանիելյանը կրկին պարտվեց

Շախմատի Գրան պրիի խաղարկության 3-րդ տուրում Էլինա Դանիելյանը կրկին պարտվեց՝ զիջելով Կատերինա Լահնոյին: Դանիելյանը կես միավորով Նախբաեւայի ու Կոստենյուկի հետ եզրափակում է աղյուսակը:

3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Համպի Կոներուն՝ պարտության մատնելով Ալեքսանդրա Կոստենյուկին: Կոներուն 3 միավորով միանձնյա առաջատարն է: 2,5 միավոր ունի Հարիկա Դրոնավալին՝ հաղթելով Օլգա Գիրյային: Առաջին պարտությունը կրեց Չժաո Սյուեն՝ զիջելով Բելա Խոթենաշվիլուն: Իսկ Նաֆիսա Մումինովան առաջին հաղթանակը տոնեց Գուլիսխան Նախբաեւայի հետ պարտիայում: Ցզյույ Վենցզյունն էլ հաղթեց Անտուանետա Ստեֆանովային:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Samsung Galaxy Note 3-ն արդեն Հայաստանում է. պատվիրեք նախապես եւ ստացեք նվեր եւ զեղչ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն տեղեկացնում է, որ այսուհետեւ կարելի է պատվիրել Samsung Galaxy Note 3 երկար սպասված սմարթֆոնը մինչեւ սեպտեմբերի 27-ը (ներառյալ) ՎիվաՍել-ՄՏՍ-ի՝ Երեւան, Ամիրյան 3 սպասարկման կենտրոնում եւ հեռախոսի S View պատյանը ստանալ նվեր: Բացի դրանից՝ կարելի է ստանալ Samsung Galaxy Gear սմարթ-ժամացույցը՝ 50 % զեղչով ձեռք բերելու կտրոն*:




Samsung Galaxy Note 3 սմարթֆոնը ստեղծված է հարստացնելու օգտագործողի առօրյան գերժամանակակից ծառայությունների եւ տեխնոլոգիաների միջոցով, իսկ հսկայական էկրանի բացառիկ պայծառությունը լուսանկարների եւ տեսանյութերի դիտումը, էլեկտրոնային գրքերի ընթերցումը եւ մուլտիմեդիայի օգտագործումը դարձնում է պարզապես անմոռանալի:

Ոճային Samsung Galaxy Gear ձեռքի սմարթ-ժամացույցը թույլ է տալիս մշտապես տեղեկանալ ստացվող զանգերի, հաղորդագրությունների, նամակների եւ հիշեցումների մասին, ցանկության դեպքում նաեւ զանգեր կատարել հենց սմարթ-ժամացույցից՝ ձայնային հրահանգով...

**Samsung Galaxy Note 3** սմարթֆոնն արժե **335 000 դրամ:**

ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոնում ձեռք բերված սմարթֆոնի համար տրամադրվում է արտադրողի 12-ամսյա պաշտոնական երաշխիք:

Ցանկության դեպքում հեռախոսը կարելի է ձեռք բերել նաեւ **ապառիկ:**

* Samsung Galaxy Gear սմարթ-ժամացույցը վաճառքի կհանվի ս.թ. հոկտեմբերից:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

# Փառատոն-ցուցահանդես Վիվասելի աջակցությամբ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է երկրի տնտեսության զարգացմանն ու գործարար կապերի ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանը: Ընկերությունը հավասարապես կարեւորում է նաեւ Հայաստանի եւ Սփյուռքի գործարարներ ներուժի համախմբումը:

Այդ տրամաբանությանշրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել «Երկրները մեկ հարկի տակ» փառատոն-ցուցահանդեսի իրականացմանը: Երկօրյա ցուցահանդեսին մասնակցեցին ոչ միայն տեղի արտադրող եւ ներկրող, այլեւ միջազգային ընկերություններ, ՀՀ-ում գործող դիվանագիտական կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ սփյուռքահայ գործարարներ:

Ցուցահանդեսը մասնակից ընկերություններին հնարավորություն է ընձեռված ներկայացնել սեփական արտադրանքն ու ծառայությունները:

**Փառատոնի աջակից՝ ՀՀ սփյուռքի նախարարություն**

**Գլխավոր գործընկեր՝ «ՎիվաՍել- ՄՏՍ» ընկերություն**

**Գործընկերներ՝ ՀՀ Երեւանի քաղաքապետարան եւ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն**

**Հեղինակ եւ կազմակերպիչ՝ «Զի Էմ Զի մեդիա գրուպ» ընկերություն**

# Որոշ փողոցներ առանց երթեւեկության

Ճանապարհային ոստիկանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Անկախության տոնի կապակցությամբ տեղի ունենալիք միջոցառումներով պայմանավորված սեպտեմբերի 20-ին եւ 21-ին կդադարեցվի երթեւեկությունը Երեւանի Հանրապետության հրապարակի շատրվանների դիմացի հատվածում, իսկ սեպտեմբերի 21-ին, ժամը 16.00-ից Հանրապետության հրապարակում եւ հարակից փողոցներում Աբովյան-Թումանյան, Նալբանդյան-Պուշկին, Տիգրան Մեծ-Խանջյան, Գրիգոր Լուսավորիչ-Իտալիայի, Խորենացի-Վազգեն Սարգսյան, Ամիրյան-Զաքյան խաչմերուկներից:

## Ցուցահանդեսի բացում

Ս. թ. սեպտեմբերի 21-ին, ժամը 15:00 Երեւանի մետրոպոլիտենի Հանրապետության հրապարակ կայարանում կբացվի «ԵՐԵՎԱՆ. Հայացք XXI-րդ դարից» լուսանկարչական ցուցահանդեսը:

## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 4500 $-ին համարժեք դրամ:

Հեռ. (077) 700-710:

## Թվով 24 երթուղիների սպասարկման մրցույթը կանցկացվի հոկտեմբերի 17-ին

Երեւանի քաղաքապետարանը կանոնավոր ուղեւորափոխադրումներ իրականացնող բոլոր ընկերություններին հրավիրում է մասնակցելու մայրաքաղաքի թվով 23 ավտոբուսային եւ 1 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման համար հայտարարված նոր մրցույթին:

Երթուղիների ուղղություններին, մրցույթի անցկացման կարգին եւ պայմաններին, ինչպես նաեւ պահանջվող փաստաթղթերի ցանկին կարելի է ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում, հետեւյալ հղումով՝ http://www.yerevan.am/edfiles/files/HAITARARUTYUN-2013.pdf :

Հայտարարված մրցույթին կարող են մասնակցել նաեւ ուղեւորափոխադրումների իրականացման փորձ ունեցող իրավաբանական անձինք:

**Երեւանի քաղաքապետարան**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը «ԼՂ/ՀԿ-6/13» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցությունների մրցույթ՝ ԼՂՀ Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Մրցակցային բանակցությունների հրավեր ստանալու համար՝ անհրաժեշտ է փոխանցել 15.000 դրամ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում ունեցած N 1930001437120100 հաշվեհամարին և դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամ՝ մինչև ս. թ. հոկտեմբերի 02-ը, ժամը 10.00-ից մինչև 18.00-ն: (ք. Երեւան, Կառավարական թիվ 3 շենք, 3 սենյակ, Սոս Գևորգյանին, հեռ. 52-09-40 (ներքին 103)): «Հայաստան» համահայկական հիմնադրամը պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ստանալուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հրավերը տրամադրել պահանջ ներկայացրած անձին:

Մրցակցային բանակցության հայտերը պետք է ներկայացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամ մինչև ս. թ. հոկտեմբերի 4-ը՝ ժամը 11:00-ը:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**

## Վաճառվում է

քարե ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.-ում, առանց միջնորդի
Հեռ.՝ 077-06-28-48, 055-06-28-48

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝ ըստ ներկայացված հերթականության:

1. Առեւտրի եւ սպասարկման սրահ, ընդ. մակերեսն է՝ 35.9 ք.մ., հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.04 հա (ընդ որում ըստ հատակագծի թիվ 1-205.0(Տարտ-246.9) 80% եւ ավելի ավարտվածության աստիճանով ինքնակամ շինություն): Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, թիվ 10/2: Լոտի մեկնարկային գինը՝ 104000000 ՀՀ դրամ:

2. Շինություններ, ընդ. մակերեսները են՝ 30.8 (Տարտ 36.1) եւ 4.2 ք.մ., հասարակական կառուցապատման եւ սպասարկման հողամաս՝ 0.028922 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, թիվ 12/7: Լոտի մեկնարկային գինը՝ 73000000 ՀՀ դրամ:

Գույքերը գրավադրված են: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 07.10.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 08.10.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարները ենթակա են վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարները Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվան նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

**Հայաստանի նկարիչների միությունը հրավիրում է**

**Խաչիկ Հարությունյանի**

ստեղծագործությունների հոբելյանական ցուցահանդեսին:

Բացումը տեղի կունենա 2013 թ.
սեպտեմբերի 25-ին, ժամը 16:00-ին,
Նկարիչների միության ցուցասրահում (2-րդ հարկ)
Ցուցահանդեսը բաց է սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը

**Հասցե՝ Երեւան, Աբովյան 16**
**Հեռ.՝ (+374 10) 56 48 53**

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 h., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 20.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: